

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ



Տարեկան գինը 10 րուբլի. կես տարվանը 6 րուբլի.
Առանձին կամարները 3 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлиси, редакция «Мелі».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Ե Ֆ օ Ն № 253.

Նմանազանները բաց է առաջարկում 10—2 ժամ
(բացի կիրակի և առաջ օրերից).

Շաբաթադրուկները ընդունվում է ամեն լիզուով.

Շաբաթադրուկները կամար վճարում են
խառնաձևեր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ Ե Ֆ օ Ն № 253.

ՀԱՅԿԵՐԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Դժուար կացութիւն. Վերջին տեղեկութիւնները. Տեղեկութիւնները գաւառից: — ՆՆՐԻՔԻՆ ՆՆՐԻՔԻՆ. Մամուլ, Մարտի և Կատար: Ի՞նչ անուն տանք: Հաւատարմութիւնը: Նոր լուսարձակութիւններ: Զանգեզուրի տնօրէնները: Զուլ-հակութեան մասին ժողով: Թաւրոսի և Երասխայի մասին: Նամակ Գրանձակից: Նամակ Վաղարշապատից: Ներքին լուրեր: — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բուլղարահայ գաղութը: Նամակ Պարսկաստանից: Արաքսի լուրեր: — ՆՆՐԻՔԻՆ. ԳԻՐԻԳՐՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐ.

ԴժՈՒՍԻ ԿԱՑՈՒԹԻՒՆ

«Մշակ» մէջ տպւած հաղորդագրութիւններէն մեր ընթերցողները պէտք է տեսնէին, որ այն շրջաններում, ուր տեղի ունեն լարված յարաբերութիւններ հայերի և թուրքերի մէջ, մարդկանց կենցաղավարական պայմանները չափազանց աննպաստ և անմխիթարական են դարձել: Գիւղերը չեն կարողանում միմեանց հետ հաղորդակցութիւն պահպանել: Գիւղերի և քաղաքների մէջ յարաբերութիւնները կարմաւ են:

Մանաւանդ աննպաստ դրութեան մէջ են գտնվում Զիվանշիրի և Զանգեզուրի գաւառները: Գիւղերը միացել են առանց նաւթի, շաքարի, երբեմն նոյն իսկ առանց ալիւրի. այլ ևս չենք խօսում դանազան ձկնիկների մասին, որոնք գտնվում էին կենտրոնական տեղերի խանութներէն:

Ճանապարհների անապահովութեան պատճառով հայ գիւղերը անկարող են գնալ անտառներ փայտ բերելու և ջաղացներ ցորեն աղալու: Այն գիւղերը, որոնք հոռւաբար այս տարի անբաւարար է եղել, դժուարանում են հեռանալ գիւղից հասց բերելու, կամ ուրիշ աշխատանքի գնալու: Գիւղացիների համար շատ դժուարացել է արտադրութիւնը, իսկ մանաւանդ ծանր պէտք է լինի այն անանապահների դրութիւնը, որոնք ձմեռվայ ընթացքում պահում են իրանց տնային անասունները գիւղից հեռու յատուկ ձմերանոցներում, ուր չկան խոզի դէմ: Իսկ չը գնալ այդ գոմերը շատ տեղերում անկարելի է, որովհետեւ գոմերի մօտ պատրաստված են լինում խոզի դէմը և յամանայն դէպք գիւղի սահմաններում անկարելի է լինում բաւականաչափ կերակուր գտնել անասունների համար:

Եթէ մենք հաւատարմութիւն լինէինք, որ մի 10—15 օրից յետոյ խաղաղութիւն կը վերականգնուի մեր գաւառական աշխարհում, առանձին մեծ ուղարկութիւն չէինք դարձնի ներկայ թշուառ կացութեան վրա և նրան կարճաժամանակեան իրեր մի ժամանակաւոր և պատահական երևոյթ: Դժուարաբար, գաւառներէն ստացված տեղեկութիւնները մեզ շատ վրդովում են: Նրանք ցոյց են տալիս, որ հայերի և թուրքերի յարաբերութիւնները դեռ հեռու են արագ բարելաւելու դրութիւնից և ժամանակ ու մեծ աշխատանք է հարկուոր մարդկանց յուզված մտքերը և կրքերը հանգստացնելու համար:

Գոնէ այն միջոցներում, որոնք մինչև այժմ գործադրված են, չէ հաստատվել խաղաղութիւն երկրի մէջ այն չափով, որ մենք մեծ յոյսով նայենք առաջիկայ շաբաթների վրա:

Ճաւախի է այդ դրութիւնը, բայց այդպէս է իրականութիւնը: Եւ մենք նրան արձանագրելով, հանդէս ենք բերում ամիսներ շարունակվող հարցը «ինչպէս ապահովել մեր երկիրը և ազգայնականութիւնը կործանումից, կոտորածից և աւերից»:

ՎԵՐԶԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հոկտեմբերի 8-ին Շուշուի ճանապարհընկան 56 հայ ուղևորները գիւղերից պաշտպանութեամբ, որոնք Աղղամում յարձակման ենթարկվեցին թուրքերի կողմից և կողոպտվեցին: Կողոպտվածները հեռագրով դիմեցին խնդրելով վերադարձնել իրանց, իրանցից խլված գոյքը և քննութիւն կատարել: Զեռք առնված միջոցների շնորհիւ յարձակվողները գտնվեցին և կալանաւորվեցին. յափշտակված իրերը նոյնպէս գտնվեցին: Իրիժանասեր տնտէրը և կողոպտուոր պատճառը թուրքերը բացատրեցին նրանով, որ նրանք կալանաւորում էին, թէ հայերը զէնք են անցկացնում: Այդ ցուցմունքը հաստատվեց: Երկու դէպքերում Աղղամ կայարանում թուրքերը մատնացոյց արին այն ուղևորների վրա, որոնք, կազակներէ պաշտպանութեամբ, բազմաթիւ ձեռք տանում էին նշանաւոր քանակութեամբ զէնքեր և փամփուշտներ: Կարգադրութիւն է արվել կրկին նայել բազմաթիւ լախ կայարանում և կազակների պահակները ուժեղացնել տրակտի վրա: Հրամայված է նոյնպէս եռանդով գործել այն բոլոր անձանց դէմ, որոնք տրակտի վրա և նրա շրջակայքում զէնք ձեռքից կերկան: Երկուսուսուպի ազմիրխտորացիայի տուած տեղեկութիւնների համեմատ, Եւլախ-Շուշու տրակտի վրա սկսված գրգռումը բացատրվում է նրանով, որ հայերը յարձակում են գործել երկու թուրք գիւղերի վրա:

Ալեքսանդրօպօլից հեռագրում են, որ հոկտեմբերի 10-ի գիշերին իս ընտանեկանները սպանվել և տեղափոխ հարուստ Զիթոցեանը և իր կինը: Ինչպէս երեւում է, սպանութիւնը կատարված է թալանելու նպատակով: Մարդասպանները փախել են:

Գրոզնի, սեպտեմբերի 10-ին: Այսօր, ցերեկվայ 11 ժամին, Գրոզնիում, բաղաւորում, անցնող պահեստի գիւղերների և չէչէնների միջև կռիւ սկսվեց: Պահեստի գիւղերները, որոնց օգնում էր ռուս ազգայնականութիւնը, ջարդ ու փշուր արին չէչէնների երկու խանութ: Անկարգութիւնը ձնչելու համար գարնիգօնի կանչված զօւսուսները ստիպված էին կրակ բանալ, որի ժամանակ բերդապահ զօրքի գիւղերներից սպանվեց մի կոզակ, վիրաւորված են երկու զինուոր: 2 չէչէններից սպանված են և վիրաւորված 15 մարդ, զինաւորապէս առևտրականներ: Ժամը մօտ 4-ին ամբողջ ցրեց: Քաղաքը զրաւեց ուժեղացված պատրուկ:

Անցեալ սեպտեմբերի 25-ին Երևան-Երասխայի գաւառից դէպի Բօրիս գիւղը տանող ճանապարհի վրա մի քանի ֆուրգօններ մօլօկաններով, որոնց հետ գնում էին և չորս հայեր, նրանց վրա յարձակվեցին մինչև հարիւր զինուորված թուրքեր, պահանջելով կանգնեցնել ֆուրգօնները և հայերին յանձնել իրանց: Երբ մօլօկանները մեղքեցին թուրքերի այդ պահանջը, թուրքերը հրացանաձգութիւն սկսեցին ֆուրգօնների ետև թափված հայերի վրա, որի ժամանակ սպանվեցին երեք հայեր, երկու եղ, հինգ ձի և վիրաւորեցին երկու ձի, իսկ ֆուրգօնները ծախկվեցին գնդակներով: Թուրքերը փախան:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գանձակ, հոկտեմբերի 8-ին: Գաւառներից վերին աստիճանի յուզիչ լուրեր են ստացվում:

վում: Փոքրեցիկների ձեռքով սպանված աւագակները մահը հաւատարմութիւն չէ տալիս մեր հաւան թուրքերին: Մինչև անգամ հայերից յարգված յայտնի Մահմեդ Իզաշին, որ քանիցս բարհատեցի և փրկեցի հայերին նախազգուշացրել է, որ պատրաստ կենան դիմադրել: Թուրքերի չար մտադրութիւններին, այդ Մահմեդ Իզաշին ևս երեսը շուտ է տուել հայերից ու սպանալի դիմք է բռնել դէպի հայեր: Նա զայրացել է իր գրագրի սպանութեան պատճառով. նա քանի օր էր կորած, հիմա ասում են, որ դիմադ գտնվել է. ոչ մի փաստ չը կայ, որ նա հայից սպանված լինի, մանաւանդ որ իբրև Մահմեդ Իզաշին ծանոթ յոյ, մեծ թուղ թշնամիք էլ է ունեցել, բայց և այնպէս այդ սպանութիւնը վերագրում են հայերին: Ինչպէս հայր պէտք է սպանել այն մարդու գրագրին ու բարեկամին, որը հայերին անչափ լաւութիւններ ունի արած: Մահմեդ Իզաշին մեղքը ձգում է հայ պահապանների վրա և այդ պատճառով ուզում է պահապանների վերացումը: Մենք գիտենք, որ Մահմեդ Իզաշին ամենալաւրող մարդն է. նա կարող է մի զինված բանակ դուրս բերել հայերի դէմ: Հէնց ասեն օր այդ դէպքից յետոյ թուրք գիւղում ձիաւորները կտրում են գիւղացիների առաջ, սպանում ու հայտնում և անխնայաբար գրագրի սպանութիւնը: Դրա անմիջական հետեանք է չուղեւորների գոմէշները բռնել ու քաղաքի Բաղմանլար թաղը գերելու ու վարձ պահանջելու իւրաքանչիւրից 20 րուբլի: Դրա հետեանք է նոյն Բաղմանլարում երկկվայ օրը ցերեկով 2 չուղեւորների հոգիների ոչնչարի հօտով անհետանալը: Դրա հետեանք է խաչաւայի մի գիւղացու գնդակով վիրաւորելը: Ախր չէ որ մինչ այդ մեր կողմերում (Բանանց, Փիք) այդպիսի բաներ չը կային:

Երկէ երեկոյանք բռնել էր Ֆիւռում թուրքա-թուրքի կողմերում առաջ գալ: Երեկոյանք ժամը մօտ 8-ին մի քանի կառքերով գիւղում թուրքեր բազմութեամբ անցնում են քաղաքի և յայ թաղի փողոցով: Երբ կառքերը շրջում են Զալու անունով փողոցը, կառքում նստած թուրքերը սկսում են խմբով օգնում հրացաններ արձակել: Անմիջապէս մեծ իրարանցում է ընկնում. զէպի վայրէ են քաղաքի արտաւոր, ոստիկանապետը և զինուորների մի փոքր խումբ: Պարզվում է, որ թուրքեր հարստաւորում եղողներն են կրակողները: Մի քանի թուրքերի տարան ոստիկանապետն:

Ա. Ս.

ՆՆՐԻՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Իշխան Տրուբեցկոյի մահը համառոտապէս ընդհանուր սուգ տարածեց, մի անգամ էլ ապօրոշմանով, թէ հասարակութիւնը որքան կարօտ է այդպիսի գործիչների: Հանգուցեալը երկար պաշտօնավարութիւն ունի իբրև փոխական պրօֆեսոր: Այդ գիտական գործունէութիւնը չէ, որ այսօր այդպիսի սուգ կըսկսեցին յիշեցնել տալիս իշխան Տրուբեցկոյի մահը, այլ այն կարճատեւ, բայց շատ բիւրիւշ հասարակական գործունէութիւնը, որ նա ցոյց տուեց այս վերջին տարին, Ռուսաստանի ազատագրական շարժման մէջ Մի անգամ էլ, ուրեմն, ապացուցեց, որ գիտականից, գրողից, առհասարակ իւրաքանչիւր մարդուց պահանջվում է որ նա լինի քաղաքացի, իր երկրի, իր ազգի համար աշխատող: Մի անգամ էլ ապացուցեց, որ միայն առաջնորդ գաղափարներն են անհատին սիրելի զարմնում հասարակութեան համար: Ռուսաց ամբողջ մամուլը ողբում է գիտական պրօֆեսորին, իբրև հասարակական գործիչի: Մեր ընթերցողներին մենք կը ծանօթացնենք միայն այն գեղեցիկ յօդուածի հետ, որ տպագրել է պ. Միլեւիչ «Речь. Вѣд.» լրագրի մէջ:

Ի՞նչ մահ... Տրուբեցկոյի գեղեցիկ և անողորմ տրամաբանական, իշխան Տրուբեցկոյ յանկարծամահ եղող «պատերազմական գիրք» և կուր ամենատարբեր ժողովրդի, պաշտ-

պանելով ռուսաց սպանութեան—դի միայն ակադեմիական, այլ ընդհանրապէս ազատութեան գործը թշնամիների բանակում: Միայն երկու օր առաջ նա գնաց Պետերբուրգ, իրագործութեան ստացած լինելով իր ընկերներից ասելու, թէ ազատութիւնը համարապետութիւնն ունի ազատութիւն: Նա ասաց այդ պէտքէ, ինչպէս իշխան Տրուբեցկոյ գիտէր ասել այնպիսի բաներ, որոնց վերաբերմամբ համոզված էր, նա շնորհապէս պաշտպանում էր իր համալսարանը, յուզվում էր, իրան վառ գգաց և մի քանի ժամից յետոյ վախճանվեց հիւանդանոցում: Իշխան Տրուբեցկոյը չէր օգնել իր ընկերներին անկողնոսի առաջ, չէր օգնել ապացուցներ դնող այն մարդկանց առջև, որոնք խորապէս անտարբեր են դէպի այն բոլորը, ինչով ցաւում էր, ինչից արտաքսւ էր գտնում ազնիւ հասարակական գործիչը—որքան տրեւելքական է այս դրութիւնը: Իշխ. Տրուբեցկոյի մահը նրա վերջին ապացույցն էր. և ռուսաց հասարակութիւնը կը կարողանայ գնահատել նրան: Հանգուցեալը մէկ էր վերջիններից, որոնք դեռ հաւատում էին, թէ հասարակական կռիւը կարելի է մղել բարոյական համոզմունքի տալիս ապացուցներով և թէ հնարաւոր է մի ինչ-որ հաշտեցում. և իր հաւատի համար նա իր կեանքը տուեց: Իշխան Տրուբեցկոյի մահը մի խոշոր, անփոխարինելի կորուստ է ազատվող Ռուսաստանի համար և միաժամանակ խոշոր հասարակական մի դէպք է: Նա իր ձեռքն առաւ մի դժուար պաշտօն, ուզում էր անհայտնի հասարակութեանը ծանօթացնելու մէջ մտնելու, նա չը նահանջեց, չը կապցաւ, ուղղակի գնաց այդ արգելքի դէմ և շարունակեց կռիւ մէջ: Նրա մահը մի աննպատակութիւն չէր կենսաբանաւոր, մի փոքր գիւղացի զինուորի չէր, այլ կուր մի հպարտ հրաւեր և ապագայ յաղթութեան գրաւական:

Պ. Միլեւիչը, նոյնպէս աչքի ընկող մի գիտնական և համակրելի հասարակական գործիչ, վերջացնում է իր յօդուածը, ասելով թէ իշխան Տրուբեցկոյ զուր չը մեռաւ: Այսպիսի մահը նախանձելի է ամեն մէկի համար:

*

Նոյն լրագրի Բերլինի թղթակիցը գրում, բաղնիքով այն հանգամանքից, որ գերմանական մայրաքաղաքում էլ բանուորական գործադուլ տեղի ունեցել, համեմատում է թէ ինչ ձևերի մէջ է արտայայտվում սոցիալական կռիւը այնտեղ, Գերմանիայում և մեզ մօտ, Ռուսաստանում: Այդ համեմատութիւնը շատ հետաքրքրական է և մեզ համար:

Դուր Բերլինից շատ հեռագրեր են կարգացել գործադուլի մասին, բայց անուշտ չէք գտել դրանց մէջ սխ. ինչ սկսել սյուսեղ գտնում էինք Լեզդի, Միւնխի և այլ մեր գործադուլների մասին եղած հեռագրերների մէջ. չը կան գրքեր, Բերլինի հեռագրերը չէ յիշատակում սպանվածներ և վիրաւորվածներ, այլ հաղորդում է միայն թէ ինչ ժողովներ տեղի ունեցան, ինչ վճիռներ կայացան, կոմիտէները ինչ չէան կազմվեցին, խաղաղացնող հաստատութիւնները ինչ փորձեր արին: Մի երևակայեք թէ գերմանացի բանուորը կրքեր չունեցող մարդ է նա նոյնպէս վրդովում է հեղափոխականների անհրաժեշտութեամբ, դատաւիրում է ժողովների մէջ ճանխել շահագործողներին: Բայց ասել և առաջ աւարող ընտանեկան շարժման մէջ նոյն տեղիկական է ինչ ունեն եապտանցիները պատերազմական գործողութիւնների մէջ: Մարդիկ մերկ ձեռքերով չեն յարձակվում բարե պատի վրա, այլ վաղորօք ամեն ինչ հաշուում են և լիք երեքնս սխալում են, այդ սխալից նոր խրատ են հանում թէ անհրաժեշտ է աւելի լուր կազմակերպութիւն և ունի կատարելագործված շխտակցութիւն: Երկրորդը—և սա ամենազինաւորն է—գործադուլի վերջին ոստիկանը գիտէ այն, ինչ չեն հասկանում ռուսաց բարձր իշխանութիւնները, այն, որ կամեալով պահպանել կարգը, պէտք է որ ինչեք էլ կանգնած լինես օրէնքի հողի վրա և չը պիտի ոտնակլիս անես ուրիշների իրաւունքները, թէ և այդ ուրիշները լինեն գործադուլ արած բանուորներ:

Այն, ամենազինաւորը այս վերջին բանն է թէ մեզանում էլ գործադուլը «ապստամբութիւն» չը համարվէր, եթէ մեզանում էլ աշխատանքի մըցութիւնը կապիտալի դէմ ան-

կարելի բան չը լինէր, օրինական կազմակերպութիւն ստանալ, այնքան զոհեր, այնքան արիւնքներ փողոցներ չէին էլ լինի:

ՄՏԲԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

V

Մի քանի ժամանակ առաջ մեր թղթակիցները հաղորդեցին, որ Գանձակում հայերի և թուրքերի մէջ միտք է ծագել գումարել հայ և թուրք ժողովուրդներին ներկայացուցիչներ համագումար, խորհրդակցելու այն միջոցներով մասին, որ պէտք է ձեռք առնել երկու ազգերի մէջ ծագած թշնամութեան և արիւնհեղու-թեան վերջ դնելու:

Նորբա Թիֆլիսի լրագրիչներից մինը, հաղորդելով, թէ Թիֆլիսում գումարված ժամանակահատվածում նոյնպէս առաջարկութիւն է եղել գումարել հայ-թուրքական ընդհանուր ժողով, վերոյիշեալ նպատակով, աւելացնում էր իր կողմից, թէ ցանկալի է, որ այդ խնդրի մասին հայ մամուլը ևս արտայայտէ իր կարծիքը:

Առաջարկում են գումարել հայ-թուրքական ընդհանուր ժողով խաղաղութիւն հաստատելու համար:

Վսեմ և բազմալի նպատակ:

Կարող ենք համարձակ ասել, որ ոչ միայն կողմնակա, այլ և հայկական մամուլի օրգանները ոչ միայն, այնքան շատ ջանքով և քաղաքական չէ հանդիմանել խաղաղութեան, եղբայրութեան, ֆազայական համերաշխութեան գաղափարին, որքան «Մշակ» լրագրիչը, որ տասնեակ տարիների ընթացքում ահագին առաջնորդներ և յօդուածներ է նուիրել խաղաղութեան կոչմանը: Երբեք է համեմարել խաղաղութեան, եղբայրական մարտն գործունէութիւն Կողմնակի լրագրիչը այլապէս և այլա-լից տարբեր հետ և ներքին հայ-թուրքական ազգային ընդհանրածափ օրից չէ դադարել յորդորել հայերին երբեք նախադրած չը լինել, հոգալ և գործել միայն ինքնապաշտպանութեան համար և ամեն կերպ աշխատել խաղաղութիւն և հաշտութիւն հաստատել:

Այդ շաղկէ մէջ «Մշակը» նոյն իսկ այնքան առաջ է գնացել, որ նրա քարոզները և յորդորները ուսանց կողմից նկատվել են չափազանց...

Սակայն, առանց հերքելու հայ-թուրքական ընդհանուր ժողովի կարևորութեան գաղափարը, մենք ստիպված ենք այսօր յայտնել, որ այդ ժողովը վաղաժամ է և այժմ նա ոչ մի օգուտ չէ կարող տալ և նրանով մենք չենք հասնի առաջադրված նպատակին:

Եւ փետրվարին տեղի ունեցան Բազմում արևելահայ դեպքերը, մենք ամեն տեղ աշխատեցինք կազմել խաղաղարար կոմիտէներ, երկու ազգերի—հայերի և թուրքերի մէջ խաղաղութիւնը պահպանել և թոյլ չը տալու, որ այդ արիւնահեղ դէպքերը լայն ծաւալ առաւանակ, կամ կրկնվեն այլ տեղերում:

Եւ մեր գաւառական գրեթէ բոլոր քաղաքներում—Բազում, Երևան, Նախիջևան, Շուշի, Գանձակ և այլ տեղեր—կազմվեցին խաղաղարար կոմիտէներ: Թիֆլիսում կազմվեց նոյն իսկ կենտրոնական խաղաղարար կոմիտէ, որ պէտք է ղեկավարէր բոլոր կոմիտէներին խաղաղարար գործունէութիւնը:

Սակայն այդ խաղաղարար կոմիտէները չը կարողացան ոչ ամբողջ կեղծ ընդհարումները, ոչ էլ նորանոր ընդհարումները և կոտորածի առաջն առնել: Այժմ այլ ևս ոչ ոք չէ խօսում խաղաղարար կոմիտէների մասին: Նրանք գրեթէ լուծվում են ամեն տեղ և այլ ևս ոչ մի գործունէութիւն չեն ցոյց տալիս:

Մեր կարծիքով, խաղաղարար գործունէութեան ապագայի հետևանքը կարելի է բացատրել նրանով, որ մենք սկզբում միակողմանի հասկացաւ և կրկնեցինք թուրք-հայկական ընդհարման պատճառը: Մենք առաջ տրամադրեցինք որոնել և գտնել միայն մի հատ յանցաւոր—բէթմալը, որ զինատուրում էր մի և նոյն երկրի ազգութիւնները իրար դէմ: Ապագայում պարզվեցին և մի քանի նոր հանգամանքներ, որոնց գոյութիւնը առաջ չէինք ենթադրում: Մենք տեսնեք նոյնպէս, որ մեր խաղաղարար կոմիտէները գործունէութեան մէջ չը կարանկեղծութիւն, որովհետեւ մի քանի տեղերում այդ կոմիտէներին մասնակցում էին անձինք, որոնք հասարակական կարծիքը ցոյց էր տա-

լիս, իբրև շարժման պարագլուխներ և ղեկավարներ:

Ուրեմն, ամենից առաջ անհրաժեշտ է ընդհարման, ծագած թշնամութեան բուն, իսկական պատճառները որոնել, հաստատել և ապա մտածել, կարելի է հեռացնել, չըացնել այդ պատճառները:

Հայ թուրքական համագումար կազմելուց առաջ, մենք պէտք է առաջուց որոշած լինենք, թէ ինչ է լինելու այդ համագումարի զբաղմունքի առարկան: Մենք պէտք է ներք պատրաստենք համագումարի համար, մենք դեռ խնդրել շատ պէտք է ձեռնը, քննել, ուսումնասիրենք, որպէս զի կարողանանք փոքր ի շատէ անաչառ, անկողմնակալ, արդարութեան և ճշմարտութեան մօտ տեղեկագիր պատրաստել համագումարի համար: Իսկ այդ տեղեկագիրը պէտք է լինի արդենք երկու ազգերի—հայ և թուրք ինտելիգենցիայի բաւելի ձգտման՝ բացատրել դէպքերը համաձայն գոյութիւն ունեցող փաստերի, իրողութիւնների: Կարելի է, օրինակ, անաչառ տեղեկագիր կազմել, հիմնվելով այնպիսի կարծիքի վրա, որ թուրք ինտելիգենցիան, իբրև խորին համոզմունք, արտայայտել է «Рысь» լրագրին, թէ իբր Գոլիցինից առաջ Կոլկասի ամբողջ վարչական և դատաստանական կազմը գտնվում էր հայերի ձեռքում, հայերը կազմում էին բոլոր պաշտօնականները և դատարանները՝ 800-ը և, ղեկավարվելով ազգայնական նկատմամբով, սատակ ֆլուտում և հարստահարում էին թուրքերին: Ով փոքր ի շատէ ծանօթ է Կոլկասի պատմութեան, նա քաջ գիտէ, որ նոյն իսկ Գոլիցինից շատ առաջ, նոյն իսկ Փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայիւիչի ժամանակ հայերը երբեք մեծամասնութիւն չեն կազմել երկրի վարչական և դատաստանական պաշտօնականների կազմի մէջ և նաեւ թիւը հազար 10—15 տղոս է եղել: Իսկ այսօր թուրք ինտելիգենցիան իր երեւակայած և հնարովի մի իրողութեան վրա է հիմնւել արեւմտահայ դէպքերի գլխաւոր պատճառներից մինը:

Ոչ, հայ-թուրքական համագումարը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ նրա առաջարկողները ցոյց տան անկեղծ պատրաստակաւ նուիրել և ցանկութիւն՝ անձնատուր լինել անաչառ, անգումնակ, անկողմնակալ ուսումնասիրութեան, որով միայն հնարաւոր կը լինի հաստատել ընդհարման արժատական պատճառները և ապա միացնել ոյժերով՝ կուել չարիքի դէմ:

Շահրթար

ԻՆՉ ԱՆՈՒՆ ՏԱՆԻՔ

Ամեն մի հասարակութիւն իր մէջ ունի որոշ բարոյական սկզբունքներ, որոնք պարտադիր են այդ հասարակութեան ամեն մի անդամի համար: Կան բարոյական սկզբունքներ, որոնք պարտադիր են ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան համար:

Ճշմարիտ է, բարոյականութիւնը փոփոխական է: Նա փոփոխվում է տեղի և ժամանակի հետ միասին, բայց մի որոշ ժամանակում, որոշ կուլտուրական բարձրութեան վրա կանգնած բոլոր ժողովուրդներին համար կայ մի միատեսակ բարոյականութիւն:

Օրինակ, մասնաբիւրնը, «դամոսը» գարշիլի, անբարոյական բան է, համարվում է հայերի, և վրացիների և ուսանելի, և առհասարակ բոլոր քաղաքակիրթ մարդկութեան մէջ:

Գուցէ բարբարոս, վայրենի կամ ստոր կուլտուրայի վրա կանգնած ազգերի մէջ դա մեղք, անբարոյականութիւն չը համարվի: Գուցէ այնպիսի մարդիկ զիջողաբար կը նային մասնաբիւրն, «դամոսիկի», լրտեսի վրա...

Գուցէ... Բայց մեզ, եւրօպական կուլտուրական հասկացողութիւնների ուղին ոտ դրած ազգերին համար ի՞նչ կայ աւելի անսուրբ, աւելի դադիր ու պիղծ՝ քան մասնութիւնը:

Լրտեսը, «գանդակը», մասնաբիւրն հասարակութեան համար մի նեխված անդամ է, որը կարող է վարակել ամբողջ հասարակութիւնը կազմը: Նրան պէտք է կտրել ու դնել շարժել: Իբր մի վաճառող պալատ, իբր մի դարչնի, ժանգաճող վերք:

Կուլտուրական կեանքի բարոյականութեան տեսանկյանց այդ հարցի վերաբերմամբ չէ կարելի երկու կարծիք ունենալ: Այդ առիթով կարծիքը պարզ է արեւ լոյսի նման և անվիճելի:

Մասնաբիւրն կեղտոս, զգելի վարմուճ է:

Բայց ի՞նչ է մասնութիւնը:

«Օգնեցե՛ք, բղաւում եմ ես,—գողը, մարդասպանը մտել է տունս, կողոպտում, սպա-

նում է ինձ, կնոյս, երեխաներիս, եղբայրներիս»:

Ես օգնութեան եմ կանչում, և գողին տալիս եմ «գող» անունը:

Կողմնակի լուծում եմ սրտացաւ դրացուս ձայնը. «Դու դարձելի ևս, մասնիչ ես»:

«Սրտացաւ» դրացիս մատ-մատի չէ խփում ինձ օգնելու: Այդ բաւական չէ, նա դեռ ինձ մասնիչ է անուանում:

Գեղեցիկ լոգիկա:

Եւ տեսնում եմ, որ աւագակներն ինձանով չեն բաւականանալու: Նրանք ինձ կողոպտու-լուց և սպանիւրց յետոյ՝ նոյն խաղը պէտք է խաղան և իմ մօտաւոր ու հեռաւոր բոլոր դրացիների վրա: Ես փորձով տեսել եմ այդ, կաշուս վրա յաճախ, շատ յաճախ դգացել եմ այդ:

Եւ ես բղաւում եմ բոլոր դրացիներին. «Չգուշացե՛ք, այս գողերը միայն ինձ թալանելու չեն եկել, այլ բոլորիս: Եկե՛ք միասին ոչնչացնենք սրանց, որպէս զի ես էլ հանգստանամ, դուք էլ ազատվե՛ք ապագայի հաստատուն վտանգից»:

Այդ բոլորից ներքից հնչում է իմ արագաւ բա-րեկաւ դրացուս ձայնը. «մասնիչ», Միանգամայն հրաշալի լոգիկա:

Ընթերցող, ճիշտ այդպիսի մի բան է կա-

տարվում հայ-թուրքական յարաբերութեան-ների պատճառների բացատրութեան գործում:

Թէ մայրաքաղաքի և թէ Կոլկասի մամուլը, քննելով հայ-թուրքական ընդհարման պատճառները, մասնացոյց է անում ի միջի ալոց և համարվում իրար: Նախկին ձայներին աւելացաւ և նոր լոյս տեսնող «Возрождение» թերթը, որը նոյնպէս ընդգծում է պանիսլա-

միզմը իրենց իրողութեան պատճառներից մէկը: Կոլկասի, Ռուսաստանի և նոյն իսկ հա-մաշխարհային մամուլը առաջ դրված է մի արեւմտեան հարց: Նոր չէ նա: Երբ Օսմանիւն ու Օսմանիւնը դուրս եկան Արաբիայից «հրով ու սրով» տարածելու Մահմէդի Ղու-նանը, երկու կուլտուրաներ իրար դարձիւ-ցին: Արեւելքն ու Արեւմուտքն էլն դարձան:

Այդ դարձիւր կուլ մի նմուշն է, որ տեղի ունի Կոլկասի արեւմտ ընթիւ վրա: Զինված խլամ է դա, որ նորից գլուխ է բարձրաց-նում: Մենք չենք նրան ստեղծել: Կայ այդ մա-սին անաղին դրականութիւն թէ Եւրօպայում և թէ Ռուսաստանում:

Մենք քննութիւն ենք կատարում, թէ ինչ-չիւ նա այսօր դեռ միայն հայերի դէմ է որո-տում:

Պատճառները շատ են և բազմ: Մեր երկրի բերօքաբաւական վարչութիւնը կամ համա-պետական արտը, հայ և թուրք տարբերի դրացիութիւնը և նրանց կուլտուրական խո-շոր տարբերութիւնը, գուցէ նաեւ հայ և թուրք բուրժուազիայի վամպիրական հակումները, և այլն: Իսկ այդ ամենի վրա աւելանում է մի հին, շատ հին պատճառ—իսլամը կամ պա-նիսլամիզմը՝ իբր կոմունիստական վարդա-պետութիւն:

Ռուսաստանի բերօքաբաւական բէթմալի խաղացած դերը հայ-թուրքական սարսափների գործում մի պարզ խնդիր է, որի մասին ամեն մարդ որոշ գաղափար ունի, բայց որի մասին գրելն անհնար է:

Իսկ պատճառների մասին շատ է գրվել, շատ աւելի էլ խօսվել է:

Մինչև այդ, մեր դրացիները լուծում էին. ոչ մի խօսք, ոչ մի դրական քայլ միջամտու-թեան, կամ գոնէ հասարակ համակրութեան: Բայց եկանք քննելու Կ. Պոլսից եկած հո-վերը, պատճառներից մէկը—պանիսլամիզմը:

Մեր դրացիները մի սրտառու համաբաշխութեամբ սկսեցին բղաւել: Մասնութիւն, «գանդակ»:

Հայն ասում է. պանիսլամիզմը միջնադա-րեան ուղղութիւն և գաղաւթեան վարդա-պետութիւն է: Նրա նպատակն է վերաստեղ-ծել մեռածը, ապօրինութեան, զգաւնութեան ու հրէշութեան բէթմալ—սուլթան Համիդի կարգելը: Այդ կարգերին ամենախոշոր հա-րուած հասցնող Կոլկասում և Անատոլիայում հայերն են եղել: և Համիդեան ազնւոսներն ամենից առաջ աքնում են հայերին կոտորել: Ղլտեւել, ինքիստիստ ու Ֆիդայիստ ուսմա-պետ անել: Երբ այդ մահացու հակառակորդը կը սկսնի, այն ժամանակ գաղաւթեան և աւագակութեան բէթմալ կը տարածենք թէ հայրց երկրի և թէ վրացիների վրա:

Դարեր հաւածված, դարեր լլկված հայու-թիւնը իր կաշու վրա է դգացել այդ ամենը: Նա անգիտէ ֆանատիկոսութեան և թուրքական լծի ամբողջ ծանրութիւնը:

Եւ դաքերով արեւմտում եղած հայութիւնը բղաւում, օգնութիւն է կանչում: Նա պար-զում, ցոյց է տալիս, որ գողութիւնը, աւա-գակութիւնը, ոճիրը միայն իրանով չէ բաւա-կանանալու: Իր դիակի վրայով անցնելու է վրացուն, ուստի, Կոլկասի բոլոր ցեղերին: Միանանք, ստուծ է հայը, կուենք այդ և ու-րիշ ընդհանուր կուլտուրական ու տարբային թշնամիների դէմ:

Իսկ մի արդար Կուլտուրոս «Մատիչ» է դրոշ-մում նրա ձևկատին:

Աւագակների աւագակութիւնը, ոճրագործ-ների ոճիրը բաց անելը «գանդակ» չէ, պարոն-ներ, այլ բարեք մարդկութեան համար.— մարդկութեան մի մասն էլ հայն է,—ուրեմն նա բարեք է և հայի համար:

Կարող ենք արդեօք փառաբանել և խնայել համարվում թիւնը եթէ նա քաղաքում է դա-դափաբական վայրենութիւն, վերադարձ դէպի թուրքական լուծը, դէպի ապօրինութեան, զրկանքի, բռնաբարութեան և արեւմտեան բէթմալ: Նրա ինտելիգենցը քանդելը, նրա դիմակը պատռելը մասնաբիւրն չէ, մայրաքաղաքի և տեղական մամուլի կողմից, այլ բարեք:

Եթէ ես գրեմ, պարզեմ լեհական կոմիտէ-ների ազգային ու մարդային առաջադիմա-կան ձգտումները, որպէս զի ժամադրման դայ ձեռքակալն նրանց—դա կը լինի մասնու-թիւն: Բայց երբ ես դուրսացնում եմ Կոլկա-սի ժողովուրդներին դալիք հրէշաւոր դժբաղ-դութիւնից, ես բարեք եմ անում:

Խաժախ

Հ Ա Ի Ա Տ Ա Շ Բ

II

Բուրժուազիայի մեղքերը անթիւ են, յան-ցանքները՝ խոշոր, աշխարհաւոր: Մյս այսպէս է: Բայց այս ճարտարութիւնը պէտք է դրժ ածել խնդրի կերպով, հիմնված երևոյթների խոր ուսումնասիրութեան վրա: Երբ էլ չարն են դրժ դնում մի գիտական սկզբունք, երբ նրան քաջընում են, ճարտարութիւնը կորցնում է իր նշանակութիւնը, կարող է դառնալ խո-զերից կոխկոտմող մարգարիտ:

Բազում փետրվարին անակնկալ կերպով տեղի ունեցան սոսկալի կոտորածներ: Ոչ ոք չէր սպասում նրանց, ամենքի համար այդ աղէտը մի կատարեալ անակնկալ էր: Դեռ արեւը չէր ցամաքել Բազումի փողոցնե-րում, կազմված մի անհգին պատինգ, ուր պարզվեցին արեւմտահայկական պատճառները: Այդտեղ Անիէր բէկ Աղաւիւր կուրծք ծնծելով խնդրում էր «հայ եղբայրներին» չը մեղադրել թուրքերին: Նա արաստանց ազատամիտ մի ճառ: Այսպէս և միւս տեղերում: Թիֆլիսի, Գանձակի, Երևանի, նոյն իսկ ղեքախա Նա-խիջևանի ցոյցերը գալիս էին ամենքին հա-ւատացնելու թէ փետրվարեան դէպքերը պա-տահականութիւն էին, թէ և քաղաքակրթու-թիւնը, խաղաղ կեցութիւնը մեր երկրում ա-պահովված են:

Բայց դիմակը շատ շուտով պատռվեց: Նոյն Անիէր-բէկ Աղաւիւր ուրիշ կերպ սկսեց երգել, երբ գնաց Պետրբուրգ: Ռուսաց լրագրիչների մէջ ապված իր յօդուածներով նա աշխատում էր համոզել թէ փետրվարեան անցքերի բուն պատճառը հայերն են: Ճարպիկ թուրքը գի-տէր թէ ինչպէս պէտք է ներգործել դեմօկրա-տիական մեր ժամանակի վրա: Եւ նա առաջ թէ անգլաւոր հայ բուրժուազիան է:

Թուրք գրողի այդ յայտնութիւնը այսօր էլ լաւ սերտած աշակերտների նման կրկնում է ամբողջ վրացական մամուլը՝ առանց գոյների ու բանականի խտրութեան:

Բայց Աղաւիւր միայն ապաւորութիւն գոր-ծելու համար էր դեմօկրատի փետրվարեան հա-գել և դատում էր, ինչպէս կարող է դատել տգէտն մէկը: Նրա համար կար հայ բուր-ժուազիա, բայց չը կար թուրք բուրժուազիա: Հօ վրացի հրապարակասօսները շատ լաւ գի-տին, որ Բազմը առանց բուրժուազիա հասա-կարգերի չեն և թուրք բուրժուազիան Բազ-ում գուցէ նոյն իսկ աւելի ուժեղ է, քան հայ բուրժուազիան:

Այս իրողութիւնը աչքի առաջ բռնելով, նստեցնենք վրացի հրապարակասօսներին դի-տական սօցիալիզմի դասադրերի առջև: Ի՞նչ կը կարգան նրանք այնտեղ: Այն, որ կապի-տալը հայրենիք ու ազգութիւն չէ ճանաչում, այն, որ բուրժուազիան երկրի բոլոր կողմե-րում մի և նոյն շահերն ունի, մի և նոյն ազ-գակցական կապերով է շղկապված և գոր-ծում է միաբան ու միակամ: Աշխատանքի շահագործութիւնը սեփական օգտի համար— ահա բուրժուազիայի սրբութիւնը սրբոցը: Ուրիշ միտք, ուրիշ գաղափար նա չունի և ունենալ չէ կարող:

Արդ, եթէ Բագուի առաջին արեւնահեղ գրեթե բոլորական մեղքը լինէր, մենք պիտի տեսնէինք համարաշխուքին թուրք ու հայ, ինչպէս և առհասարակ ամբողջ բուրժուական մէջ: Պէտք է տեսնէինք սպանողներին, կրակողներին միայն բուրժուականի դէմ գործելիս, այն է ոչ միայն հայ, այլ և թուրք, ուստի, անգլիացի բուրժուականի դէմ: Մենք պէտք է գտնէինք գիտակցութեան որ և է նշոյլ ամբողջ շարժման մէջ: Բայց գիտակցութիւն եթէ կար, դասակարգային չէր, այլ ազգայնական, թուրք խուժանը հաւասար եւանդով սպանում էր և՛ բանտորին, և՛ բուրժուականին, բաւական է, որ նրանք հայ են:

Եւ սակայն, պ. Կարբէրյան «Возрождение» լրագրի մէջ դարձանալի անձնագրաստանութեամբ ասում է. «Հայ-թուրքական արեւնահեղ ընդհարումը—դասակարգային կռիւ թուրքական պետութեան հանդէպ: Ո՛րքան և ինչ հանգամանքներէ մէջ էր տեսնուած այդ կռիւը: Միթէ նախնական դարձեալ, ուր գեղացիին մորթում էր իր նման գեղացուն: Միթէ Չանգի զուրի գաւառում էր տեսնուած: Ահա պաշտօնական հաղորդագրութիւնն ասում է, թէ այդ գաւառում հողերակալներին և այլ ազգութեան անհոգիները մասնագրական ամբողջ գործողութեմ էր հայերի դէմ: Այդ էլ, փոքր Աստուծոյ, հայկական տեղեկութիւն չէ, որ չը հաւատարմ: Եւ գիտէ՞ք ինչից էր կազմուած այդ գործողութեմը: Այսպիսի թուրքերից, որոնք նոյն իսկ դեռ նստակեց կիսաքրիս չեն սովորած, որոնք դեռ խաշնարած նոսրանք են: Դասակարգային կռիւ նրանց մէջ, բուրժուականի հակաբուրժուական նրանց մէջ...»

Իսկ դասակարգային կռիւ է կանանց ու աղջկանց ընտարարել, 800 բնակիչ ունեցող գիւղեր ըստ մասնագրականացնելը, եկեղեցիներ պղծելը, ամբողջ պաշտամունքի առարկաները ոտի տակ տալը, պատուելը: Ասոցէ՞ք կրօնական ֆանատիկութիւն, ազգայնական կատաղութիւն, միացած անպատիժ աւարատութեան, յափշտակներէ գրաւչութեան հետ, և մենք ձեզ կը հասկնանք: Բայց դասակարգային կռիւ այդ բարբարոսութիւններէ մէջ—դա մի այնպիսի անակնկալութիւն է, որին անշուշտ միայն վրացի հրապարակախօսներն են հաւատում: Ընդհակառակն, այս ընդհարումները ցոյց են տալիս, որ տաւրաբարբար դասակարգային գիտակցութիւնը բոլորովին գոյութիւն չունի: Այդ գիտակցութիւնը շատ պիտի լինի մանաւանդ խոշոր արդիւնաբերութեան վայրում: Եւ սակայն մենք տեսնում ենք, որ Բալխանիում թուրք բանտը սպանում էր հայ բանտորին: Հարցնում ենք՝ այդ գիտակցութիւնը շատ է ազգայնացած Վրաստանում: Պրոֆէսոր Մալը գրում էր մի քանի շաբաթ առաջ, թէ մինչդեռ բանտը գործիացի բանտորին չէ ուղղում թոյլ տալ բանտորին իր սահմաններում:

Պէտք է, ուրեմն, առ այժմ դէն դնել դասակարգային կռիւ շարունակ թուրք-հայկական ընդհարումների մէջ: Նոյն պ. Կարբէրյան ասում է, թէ հայ բուրժուական կարողացել է իր շահերը դարձնել ամբողջ հայ ազգի շահեր ու այսպիսով ժամանակակարգային կանգնեցրել է հայ պրոլետարիատի դասակարգային գիտակցութիւնը: Մենք կասնք, որ հայ բուրժուական օլդեմոյ էլ բացառութիւն չէ կազմում, որ այդպէս է ամեն մի ազգի բուրժուական: Երկրորդ, պնդել մի այդպիսի բան նշանակում է չը ճանաչել այն աղբը, որի մասին այժման հեղինակօրէն դատողութիւն են անում: Բուրժուական հայերի մէջ այնքան ամենակարող չէ, ինչպէս կարծում էք: Հայ ժողովուրդը գիտէ թէ ինչ է բուրժուականը: Հայ պրոլետարիատը կը ցանկանար միայն, որ անկեղծօրէն, մարդկօրէն վերաբերվէին իրան և ոչ թէ ազգայնամոլ պոլիտիկանութեան առարկայ դարձնէին իր վիճակը, իր տանջանքները:

Այսպիսի վերաբերմունք պահանջել կարող են ոչ միայն երեւնի թիւրքահայ գաղթականները, այժմ հայաստանի բազմաթիւ շտաբներում ուսանողները, որի առաջին հալածողները, դուր էիք, դէմօկրատ յորժորվողները: Այդպիսի վարժունք պահանջում է ձեռնարկ և բուն կողմաստիքային աշխատակող դասակարգը: Նա Բալխանիում մատնվեց սրի ու կրակի, կողմից ամեն ինչ, դարձաւ դժբախտ թափառական, բայց ինչ ալ երբ, դէմօկրատները, այդ սոված, փողոց շարժումը բազմութեան համար: Դուք լոկ ակադեմիական դատողութիւնների առարկայ դարձրիք:

Նրան և իրական օգնութեան, կարեկցութեան չէր անգամ ցոյց չը տուէր. ընդհակառակն, շտապեցիք յայտարարել թէ նա էլ նոյնքան մեղավոր է, որքան թուրքերը...

Եւ դա այն իսկ պրոլետարիատն է, որ մի ժամանակ Բագուի ցոյցերի մէջ առաջնութեան էր, լցնում էր Գոլիցինեան բանտը յանուն դեմօկրատիկական գաղափարի:

Այժմ ինչ պատահեց, որ այնքան արհամարհում կարծիք կազմեցիք նրա մասին:

Միթէ մի և նոյն երևոյթը չէ այժմ, ինչ էր հին նացիօնալիստութեան ասպետ ձաւ՝ ձաւաձէի ժամանակ, այսինքն կեղծաւորական մի կաթիլ արտասուել՝ նացիօնալիստական ամենակերութիւնը քողարկելու համար...

ՆՈՐ ԼՈՒՍԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայ-թուրքական արեւնահեղ ընդհարումների և կոտորածների իսկական պատճառները հետզհետեւ աւելի և աւելի են լուսաբանվում: Լուսաբանվում են և այդ աղէտների շատ կողմերը, որոնք մինչև այժմ մեզ համար մութն էին մնացել: Օրինակ, յայտնի է, որ աւարատութեան և ջարդի մասնակցում էին նաև պարսիկ պատանի բանտները, որոնք յայտնի են Բագուի ընդհանուր «Համալսարան» անունով: Նրանցից շատերը սպանվում էին գլխաւորապէս գործի ձեռքով և այդ հանգամանքը առիթ էր տալիս ազգիստարակներին մեղադրելու հայերին, թէ նրանք, հակառակ այն բոլոր արդար վարժունքին, որ պարսիկ կառավարութիւնը ցոյց է տալիս հայերին, չեն խնայում պարսկապատանիներին: Այժմ աղէտի այդ կողմն ևս լուսաբանվում է և մենք իմանում ենք, թէ ինչից դրդված պարսիկ բանտները մասնակցում էին աւարատութիւններին և կոտորածներին և դրանով իրանք ևս ենթարկվում էին պարսիկների զորքի և հայերի կողմից:

Պետերբուրգում գտնվող Նախալայն գործերի խորհրդակցութեան երկու կարևոր տեղեկագրեր ներկայացրեցին, մինը Նախալայն խորհրդակցութեան կողմից, որ կազմել էր վեճակագրող Գուկովսկին բանտական շարժման մասին Բագուի և միւսը, սեպտեմբերի 30-ի նիստին՝ բանտական դասակարգի ներկայացուցիչները: Ինչպէս յայտնի է, խորհրդակցութիւնը Սիւլիցի սեպտեմբերի 22-ին և աւարատվեց հոկտեմբերի 4-ին, բայց Բագուի բանտորինների պատգամաւորութեան թոյլատրվեց մասնակցել խորհրդակցութեան միայն սեպտեմբերի 30-ին. այդ նիստում և արժանիվեց բանտական հարցը Բագուի:

Խորհրդակցութեան նախագահ ֆինանսների մինիստրը յայտնեց, որ նա թոյլ չի տալ ընդել բանտորինների կողմից յարուցված այնպիսի հարցեր, որոնք իրաւական (այն է քաղաքական) բնույթով են ունեն, որ Բագուի բանտները կարող են խօսել միայն իրանց տեղական կարեւորների մասին և լուսաբանել այն պայմանները, որոնց մէջ ընթանում է իրանց աշխատութիւնը: Բանտորինների ներկայացուցիչը պատասխանեց, որ նախագահի արգելքը դնում է նրանց շատ ծանր վիճակի մէջ: Մեր մեղքը չէ, ասաց նա—որ բանտական հարցի ընդհանուր դրութիւնները առանձնապէս չօրոգիւմ են Բագուի բանտներին, հէջ նրանք մէջն է ամբողջ շարքը: Արգելք լով խօսել նրանց մասին, դուք զրկում էք մեզ, բանտներին պատուիրակներին, ընդհանրապէս խօսելու հնարաւորութիւնից: Եթէ իշխանութիւնը անկարող է ստիպել Նախալայնի նախագահին բանտը բանտորինների վիճակը, այն ժամանակ անհրաժեշտ է ստեղծել մի ուրիշ ոյժ, բանտական ոյժ, որ ինքը կարողանար ձեռք բերել այդ:

Մինիստրը յայտնեց որ նա ոչինչ չունի ընդդէմ, եթէ բանտներին կենցաղի մասին ամենամանրամասն խօսեն: Իրեն դրա պատասխան, բանտներին ներկայացուցիչը կարդաց մի ընդարձակ բացատրիչ գիտկցում, որ այժմ տպւած է «Торг. Промыш. Газ.» թերթում: Այդ գիտկցութիւնը մանրամասն բացատրում է բանտական շարժման ծագումը և ընթացքը Բագուի շրջանում, այն է 1903, 1904 և 1905 տարիների գործադուլները, նրանց յաւելացած տնտեսական և քաղաքական պահանջները, ֆերմաների և իշխանութիւնների վերաբերմունքը դէպի բանտները, այն պատճառները, որոնք ստիպեցին բանտներին տնտեսական պահանջներից աչցնել քաղաքականին և վերջացնում է 1905 թ. օգոստոսի սոսկալի դրամայի բացատրութեամբ:

«Կոտորածի ընթացքը և բանտորինները ցոյց տուեց բոլոր բանտներին, որ նրա

զխաւոր ներշնչող տեղական իշխանութիւնն էր, որ ինքը կոտորածը, ուղղված հայերի դէմ, իրեն գործադուլ անողներին, խուլարարների դէմ, իսկապէս ուղղված էր բանտական շարժման դէմ: Եւ ինչ ստացվեց. «բանտներին վրա կոտորածի ազդեցութիւնը միայն մի ուղղութեամբ յայտնվեց—աւելի խորապէս զգացվեց ոչ միայն բանտներին, այլ և ամբողջ աշխատող Ռուսաստանի բաւազորութեան գիտակցութիւնը»:

Բագուի կոտորածի մասին ուրիշ գործերի և, բացատրողների հակառակ, ուստի բանտները պաշտպան են հանդիսանում իշխանութեան ձեռքով արտաքսված պարսիկ-բանտներին, որոնց բուրք բեգեր ուղղակի ֆուլմ էին դեպի աւարատութիւն:

Եւ պարսիկ բանտները «լալիս էին, բայց գնում էին, և այդուհետ Դրա մէջ մի անգամ ևս արտայայտվեց այն ահագին տնտեսական կախումը, որի մէջ գտնվում էին պարսիկ-բանտները գիւղացիների վերաբերմամբ»:

Բանտներին ձուռ անագին տպաւորութիւն գործեց խորհրդակցութեան վրա: Մի քանի կէտերի մէջ նա ուղղակի մեղադրական ակտ էր ֆերմաների դէմ: Ֆերմաների ծառայողները բռնապէս մտնող գաղտնի ոստիկանութեան ագենտների դեր էին կատարում և աւելի շատ կամ քիչ աչքի ընկնող բանտներին յանձնում էին կառավարութեան ձեռքը, Այդպէս էլ հասկացաւ ձուռ և ֆինանսների մի նիստում «Торг. Пром. Газ.» ասելով, նա մատնացող արեց խորհրդակցութեան մի շարք մեղադրանքների վրա, որոնք անվում են դեմ կուցագրի մէջ նախագործների և նախագահների վարչութեան դէմ և յայտնեց, որ կը սպասէ նրանց բացատրութիւններին: «Արած մեղադրանքները, ասաց նա, այնքան ծանր են, իրեն յանդիմանութիւնն տուած խոստման չը կատարված, որ չեն կարող մնալ անպատասխան՝ ճշմարտութեան շահերի համար»:

Յաջորդ անգամ մենք կը բերենք Նախալայն խորհրդակցութեան ներկայացրած գիտկցագրերը:

ԶԱՆԳԵԶՈՒԻՐԻ ՏՆՈՐԵՆՆԵՐԸ

Շուշու օգոստոսի 16-ի կոտորածը արձագանք գտաւ նաև Գորիսի շրջանում:

Սիւլիցին Մինքեանդի, Սոգոմարի, Ալիդուլիչին և այլ գիւղերի կոտորածները: Գորիսը համարեալ պաշարված դրութեան մէջ էր, գաւառագետ Ա. Կալանիսի չէր կարողանում օգնութեան հասնել վերոյիշեալ գիւղերի կոտորածի առաջն առնելու, պատճառանքով, որ մի կողմից թուրք խուժանը—սարկունները, միւս կողմից Իլդրիմ-բէգի Սուլթանօվը իր ապագատակալով սպառնում են Գորիսին և շուտով յարձակվելով՝ կոտորելու են հայ ազգաբնակչութեանը: Մինչ գաւառագետ Ա. Կալանիսի յարաբերութեան մէջ էր սարկունների, գեօրիսիների և Իլդրիմ-բէգի հետ, Մինքեանդը իր շրջակայքով ձեռքից դուրս եկաւ: Հէջ այդ ժամանակ ստացվեց պրիստու Վսիկեսեսիկոյց մի նամակ Իլդրիմ-բէգի մի շարք պահանջներով հայ հասարակութիւնից, որ եթէ ժամանակին իր պահանջներին (բաւարարութիւն չը տրվի, պաշտօնագէտ յայտարարում է հայ ազգաբնակչութեանը պատերազմը:

Ընթեցողը երկի կը հետաքրքրվի թուրք բէգի պահանջներով: Ահաւասիկ նրա պահանջները. 1) Գորիսում եղած թուրք ընտանիքները ազատ թողնվեն Գորիսից հեռանալու: Իր կը ցանկանան, որոնց մենք պահում էինք իրեն պատանդներ. 2) Սարկուններին ազատ ճանապարհ տալ անցնելու. 3) Հեռացնել Գորիսի երիտասարդութիւնից կազմակերպված ինքնապաշտպանութեան համար դիրքերի բոլոր մարդկները և 4) 10,000 ռուբլի կանխիկ դրամ տալ Իլդրիմ-բէգ Սուլթանօվին իրեն վարձատրութիւն: Գորիսի երիտասարդութիւնը ստանալով վերոյիշեալ բէգի նամակը, պահեց իր մօտ, չը կամեցաւ նրա և ոչ մի պահանջին բաւարարութիւն տալ, միայն բերանացի կերպով յայտնեց, որ ապաւեղել բաց է նրա համար գործելու:

Այսպիսի յայտարարութիւնից յետոյ տեղացի թուրքերը հաւաքվեցին գաւառագետի մօտ գաւառական դատարանը՝ հայերի հետ միասին խորհրդակցելու, թէ ինչպէս պէտք է անել, որ Իլդրիմ-բէգը և ասպետակալութեամբ խաղաղ կերպով հեռանան: Ժողովին ներկայ էին գաւառագետը, հաշտարար միջնորդը, Ներսէս հայր սուրբը—Տաթևի յաջորդ—հաշտարար դատաւոր Շ. Մելիք ֆաշայեանցը և ուրիշ պաշտօնականներ: Ժողովը միաձայն որոշեց, որ հասարակութիւնից մի քանի անձինք (հայ և թուրք) ըրտրվեն և ուղարկվեն Իլդրիմ-բէգ Սուլթան

նօվին իր չար մտքերից յետ կանգնեցնելու: Ընտրվեցին մի քանի յայտնի անձինք, որոնց թուում և գաւառագետը և ճանապարհվեցին դէպի Իլդրիմ-բէգը: Երեկոյան մի օրով այնտեղ, առաւօտեան վերադարձան Գորիս, Իլդրիմ-բէգի հետ միասին և ժողովրդին յայտանեցին, որ արդէն հաշտութիւնը կայացել է և յիշեալ բէգի մարդիկը ցրված են աչքէն: Նախորդ օրը գաւառագետը, Ներսէս հայր սուրբը, Իլդրիմ-բէգը և մի քանի անձինք ճանապարհվում են գիւղերը—կոտորածի վայրերը շրջելու և հասարակութեանը յայտնելու հաշտութեան մասին: Չը մոռանաւ այստեղ յիշելու, որ Իլդրիմ-բէգը՝ օգտվելով հանգամանքից՝ ինչպիսի գաւառագետ Ա. Կալանիսից, որ մի քանի թուրք բանտարկեալների արձակէ դեռ բանտարկութեան ժամանակվոցը չը լրացած: Պ. Գաւառագետը կատարում է նրա խնդրերը և աւելի շտապեցնում կուտղ աւազակների թիւը: Իլդրիմ-բէգը իր մարդկանցով, զինված, գաւառագետ Ա. Կալանիսի հետ հեռանալու ժամանակ հայ հասարակութեանն ասաց. «Այ հասարակութիւն, ա՛ ջաւաթ, ինչ էք ցանկանում, ամեն բան ինձանից է կախված, ուղենամ կը կռւեմ, ուղենամ կը բարձրեմ»:

(Երեւալ բէգը շատ լաւ խօսում է հայերէն): Պէտք է նկատել, որ երբ թուրք բէգը, գաւառագետի և հայ հասարակութեան հետ խաղաղութեան մասին էին խօսում, նրա որդի Շաւիթ պրիստու Մելիք-Ասլանօվի հետ, Մինքեանդի հրոսակալների գլուխ անցած՝ կոտորում, շնորհ էին հայ ազգաբնակչութեանը: Ո՛հ, ընթերցող, եթէ ներկայ լինէիք տեսնէիք թէ ինչպիսի եղևուկագործութիւններ են կատարել և ինչպէս են կոտորել ծծի երեխաներից մինչև ծերերը, կը սարսափէիք: Ել չէին խնայել կոտորելու ժամանակ. գործադրել էին կացին, ցաքատ, դանակ, փայտ և ինչ ուղում էր:

Երբ գաւառագետ Ա. Կալանիսի, հայր Մելիք-Թանգեանը և թուրք բէգը ճանապարհվում են գիւղերը, պրիսից Նապալէսից Դարաշէյազեց ստացվում է հեռագիր գաւառագետի անունով, որը պահանջում է կարճ ճանապարհ ցոյց տալ գալու համար: Հայ ազգաբնակչութեանը լսելով այս մասին, իսկոյն հասարակութեան կողմից մի հոգալիք է ուղարկում թէ «Ձեր գալուստը անհրաժեշտ է»: Սեպտեմբերի 3 ին պրիսիցը ժամանում է Գորիս: Հայերի կողմից ընտրված անձինք ներկայանում են նրան և բարի գալուստ մաղթելուց յետոյ՝ ներկայացնում են մի խնդրագիր օրվայ չարիքների և կարեւորների վերաբերեալ: Պրիսից պատասխանում է, խնդրագիրը կարդալուց յետոյ, որ կամ բերանացի կամ գրաւոր կերպով կը պատասխանէ և կաշխատէ ամեն կերպ բաւարարութիւն տալ ազգաբնակչութեանը:

Հէջ այդ ժամանակ յանձնում ենք նաև Իլդրիմ բէգ Սուլթանօվի նամակը և բովանդակութիւնը պատմում նորին բարձրութեանը: Նա երբ իմանում է նամակի բովանդակութիւնը, գործանալով ասում է, թէ «Կարելի է յիշեալ բէգին իր որդու հետ բանտարկել և պատժել ամենախիստ կերպով»: Գաւառագետ Ա. Կալանիսի յայտնում է, որ բացի այդ նամակը՝ իր մօտ գտնվում են նաև ուրիշ նամակներ, որոնց հիման վրա կարելի է խիստ պատժել այդ աւազակաբարոյ մարդուն, որը եղել է Չանգիզուրի կոտորածի գլխաւոր պատճառ: Հայ ազգաբնակչութիւնը մինչև այսօր սպասում էր տեսնելու այդ կոտորածի հեղինակներին պատժված, սակայն փոխանակ պատժելու, մենք «Մշակի» № 202-ում կարդում ենք, որ նոյն բէգը 500 ձիաւորներով նորից վտանգ է սպառնում Չանգիզուրի հայ ազգաբնակչութեանը: Թէ ինչ կը լինի սրա վերջը—Աստուած գիտէ:

Կոտորածի հեղինակները յայտնի են, եթէ ոչ ուրիշ տեղերում, գոնէ Չանգիզուրում—գրաւոր փաստաթղթեր էլ կան: Եթէ այսպիսի ամենքին յայտնի և աշխարհայայտեալները չեն պատժվում, ապա կոտորածը վերջ կունենայ, ընթերցող: Կարդացէք և լաւ մտածեցէ՛ք Հ.—Արշն:

Թ. Գլխ, հոկտ. 5.

ԶՈՒԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԺՈՂՈՎ

Մենք հաղորդել էինք, որ Թիֆլիսի Հայուհեաց ընկերութեան կարուձիկ դպրոցում պէտք է կայանար մի ժողովը ընդհանուր շուշուական արհեստի տարածման մասին հայ գիւղերում:

Ժողովը կայացաւ երկուշաբթի, հոկտեմբերի 10-ին, քառասուն անձի ներկայութեամբ, Ա. Բալխանիսի և Նախագահող յայտնեց, որ առաջիկայ նիստ

առ նախ կը լսէ տիկին Օհանեանի զեկուցումը ջուրհակութեան և անայնադործական արհեստի զարգացման մասին, կը ծանօթանայ այն գործուածքներէ հետ, որոնք պատրաստուել են թաւիչի զիւղում տիկին Օհանեանի զեկուցումէն ետք, յետոյ ընտելեան կենթարկէ զեկուցման կէտերը և վերջապէս կընտրէ մի մասնաժողով յարուցված խնդիրը վերջնականապէս մշակելու և նրա իրազեկութեան համար գործնական միջոցներ գտնելու:

Տիկին Օհանեան կարգաց մի զեկուցում, որի մէջ նա խօսում է անայնադործական և մասնաւորապէս ջուրհակութեան գործի տարածման եղանակներէ մասին: Զեկուցման կէտերը առաջ չենք բերում, որովհետեւ նա կը ապագայի «Մշակի» մէջ, սկսած վաղվայ համարէն: Տիկին Օհանեան ծանօթացրեց ներկայ եղողներին այն գործուածքներէ հետ, որ բերել էր թաւիչի գիւղից:

Գործուածքները լաւ տպաւորութիւն թողին և շատ նպաստեցին տիկին զեկուցման հիմնական իմաստին: Հանդիսականներէ համար պարզ էր, որ զիւղական միջոցներով, արդարեւ, կարելի է առաջացնել օգտաւետ գործ և պատրաստել իրեր, որոնք կարող են գործադրութիւն գտնել թէ զիւղերում և թէ քաղաքներում:

Յ. Փիլիպեան բացատրելով, որ իւրաքանչիւր անայնադործական արհեստի մէջ պէտք է զանազանել զեղարեւոտական, տեխնիքական և մասնաւորապէս պահպանող, խօսեց այդ պահանջներին բաւարարութիւն տալու ուղիներէ և միջոցներէ մասին, աւելացնելով և մի քանի խորհրդածութիւններ իրերի վաճառահանութեան մասին:

Տիկին Դարեան հաղորդեց, որ նա փորձել է յարգել հիւսուածքներէ արհեստը զարգացնելու Պարսկաստանում, բայց մի բան արգելք է հանդիսանում այդ ցանկութեան, այդ այն է, որ Անդրկովկասում և Պարսկաստանում հացարոյսերի ծննդոտը չէ պահպանվում, այլ նրանից դարձան են շինում: Բայց անկասկած կան տեղեր, ուր կարելի է զարգացնել և այդ արհեստը, որ բաւական օգուտ է տալիս ուրիշ երկրներէ, որոնցից Շվեյցարիայի ժողովրդին:

Վերջում ընտրվեց մի մասնաժողով յարուցված հարցի մշակութեան համար: Ընտրվեցին տիկիններ Օհանեան, Մարտիրոսեան, Դանթեան, իշխ. Թումանեան, Անէմեան, Մուրադեան, պարոններ Գալանթար, Փիլարեան, Դաւթարեան և Միսայկանեան:

ՔԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱՇՏՈՒԹԻՒՆ

(«Շրից բարեկամ» պիսը հօդը բեմի վրա)

Հայ դրամատիկական խումբը, երկուշաբթի, հոկտեմբերի 10-ին, Թիֆլիսի արտիստական թատրոնում ներկայացրեց Շանթի «Շրից բարեկամը» կօմիդիան երկու արարածով:

Պիեսի գլխաւոր նպատակն է գրողատիկ ամուսնութիւնը, ցոյց տալ այն փնտռելը, որ առաջ են գալիս նրկի համար ամուսնութեան պակասելուց և որդեկանութեան նուազելուց: Պիեսը գրված է Շանթի սիրտը համար, ուր ազգայնականութիւնը աճում է շատ դանդաղ:

Պիեսը, իբրեւ թատերական դրամա, չունի մեծ դրամատիկական արժանաւորութիւններ և ամենալաւ կատարման դէպքում թողնում է միջակ տպաւորութիւն:

Այդ պիեսում երկու դեր կատարվեցին մեծ աջողութեամբ. դրանք հրէայ Դաւիթ Զիլիսի դերն էր, որ կատարում էր Վրոյր և օրիորդ Միւլիկի դերը, որ կատարում էր տիկին Աւետեան:

Վրոյրի դերի մէջ պէտք էր միացնել յամառ ծրագիր առաջ տանող մի անձնաւորութիւն հանաքներ սիրող և խորամանկ գործող մի մարդու հետ: Վրոյրին աջողվեց կենդանի մի առիպ դուրս բերել: Տեղ տեղ լուրջ ծրագրով գործողի տիպը թուլանում էր և զանգոյստութիւնը քիչ էր մնում որ մօտենար շարժի, բայց և այնպէս չափը բաւական պահպանված էր: Վրոյրը արժանապաւ բռնուն ծափահարութիւններէ:

Միւլիկի դերի մէջ տիկին Աւետեան բնորոշ էր և կարողացաւ ամբողջացնել պիեսի դուրս բերած տիպը:

Անցեալներում մեծ անիթ ենք ունեցել խօսելու տիկին Աւետեանի դերակատարութեան վրա և նկատել էինք, որ նա մի որոշ ձևով սկսում է դերը, բայց չէ կարողանում նորի եղանակով շարունակել կատարումը մինչև վերջ: Այս անգամ մեծ տեսանք մեծ առաջադիմութիւն: Տեղը մտածված էր, ուսումնասիրված, բնորոշ կերպով ըմբռնված և մինչև վերջ

հարգաւորութեամբ պահպանված էր ամբողջութեան մէջ:

Պատրոսեան, որ կատարում էր կալուածատէր Թորոսի դերը, չէր ոգևորվել ոչ իր դերով, ոչ այն տիպով, որ ներկայացնում էր, ուստի միայն տեղ տեղ նա մեղ տալիս էր կենսական տիպի արտացոլում:

Զեկովի «Առաջադիմութիւն» վերջիլում բոլոր կատարողներն էլ Միւրադեան, Աւետեան և տ. Նոնիկեան բաւարար էին և պիսը խաղացվեց աշխոյժով, թողնելով տպաւորութիւն հանդիսականներէ վրա:

Միւրոյ

ՆԱՄԱԿ ԳԱՂԱՅԻՑ

Հոկտեմբերի 7-ին

Դանձակի քաղաքային ուսումնարանի տեսչական հարցը օրվայ հրատապ խնդիր է դառնում: Անցեալ ուսումնական տարին մի քանի անգամ այդ հարցը հրապարակական խորհրդակցութեան առարկայ դարձաւ: Մենք ներկայ էինք գրեթէ բոլոր ժողովներին՝ ինչպէս հայ, նոյնպէս և թուրք աշակերտները վերին աստիճանի դժգոհ էին տեսչից, բողոքներ, գահգատներ էին, որ թափում էին աշակերտները առանց քաջկրօն, հրապարակի վրա էին դնում տեսչի պակասութիւնները...

Թուրք, հայ և ռուս աշակերտները միասին և համեմատաբար էին:

Անցեալ ուսումնական տարվայ վերջը յաժառ լուրեր էին պատում, որ տեսչը հրաժարվելու է իր պաշտօնից և աշակերտներին աջակցելու անտանելի կացութիւնից: Լսվում էր, որ տեսչի պաշտօնը ստանձնելու է ուսումնարանում հեղինակութիւն վայելող և հայ ու թուրք աշակերտների սէրը գրաւած Ստեփան Տէր-Աւետիբեանցը: Այդ ուրախութեանը սահման չը կար, երբ այս ուսումնական տարվայ սկզբին, տեսչի բացակայութեան ժամանակ, պ. Տ. Աւետիբեանը վարում էր տեսչի պաշտօնը: Բայց չը նայած աշակերտների անկեղծութեան, տեսչը այս տարի ևս մնում է իր պաշտօնում: Տրուածներին չափ ու սահման չու կար. յուզվեցին աշակերտները մտքերը, որոնք դիմեցին գործադուլի և ուսումնարանի մէջ անկարգութիւններ ու լուսաւորում ակադեմիկները կոտորատելով՝ ուղեցան ազգաբնակչութեան ուշադրութիւնը դէպի իրանց գրաւել:

Դիմելուօրին հասաւ այս ոչ ցանկալի լուրը: Կարիք եղաւ աշակերտների ծնողներից մի ժողով կազմել ու խորհրդակցութեան առարկայ դարձնել քաղաքում սուր կերպարանք ստացած տեսչական հարցը:

Առաջին ժողովը ուրբաթ օրն էր, ամսի 7-ին. այդ օրը տուն էր թուրքերի համար, բոլորը համարեա ներկայ էին. հայերը, ինչպէս միշտ, այս անգամ ևս իրանց անտարբերութեան և անհոգութեան շնորհիւ փայլում էին իրանց բացակայութեամբ:

Ժողովի մէջ իրարանցում ընկաւ, երբ թուրքերը իր գարման փորձաթէւ հօյրի, ուղղակի հրապարակապէս յայտարարեցին, որ իրանք կատարեալ գոհ են տեսչի ծիրցելաձէից և հակառակ են նրա տեղը ուրիշին հրաւիրելուն: Կային և յայտնի մոլեռանդ հակառակորդներ, որոնք առաջարկում էին, որ թէ ներկայ տեսչը հեռացվի, նրա տեղը անպայման պէտք է չափակվի թուրք տեսչի:

Ասողներ, պատճառաբանողներ են լինում, որ հայ աշակերտների թիւը 500 լինելով, թուրքերին 110, հետեւաբար խցի օրէնքով տեսչը կարող էր, որ հայ լինի, այն էլ երկու ազգերի աշակերտներից անխորշ յարգված Ս. Տէր-Աւետիբեանը: Չէ՞ որ, ինչպէս ասում են, պ. Տէր-Աւետիբեանը տեսչի պաշտօնով նշանակված է եղել Նուխի, սակայն նորի մեծամասնութեան պատճառով է, որ նրա տեղ նախապատուութիւնը թուրք տեսչին են տուել, թուրք հասարակութեան խնդրանքով:

Եթէ երկու կանգ չառնենք առաջին ծնողական ժողովի վրա, պէտք է նկատենք, որ ըստ երևոյթին թուրք ծնողները, հակառակ իրանց որդիների կամքի, հայ աշակերտներին հակառակ ուղղութիւն էին բռնել: Բարեբախտաբար նրանք մէջ կային նաև խոհմ ու լուրջ մարդիկ, որոնք ընդունեցին հայերի առաջարկութիւնը—ժողովը 2 օրով յետաձգել—կերպարակի օրվայ:

Այսօր, կիրակի, ժամի 11-ին ուսումնարանի դահլիճը լցվել էր երկու ազգից ահագին բազմութեամբ: Ժողովին մասնակցում էր ժողովրդական ուսումնարանի ղեկավար պ. Լեւիկցիկին: Վերջինս իր բաւական երկար ճառի մէջ աշխատում էր աղագոյցանել աշակերտների բռնած ընթացքի փաստագրութիւնը:

«Եթէ համալսարաններում ուսանողները գործադուլ են անում և չեն ուզում այս կամ այն պրօֆեսորին, դա չէ նշանակում, որ մեր աշակերտները իրաւունք ունեն նրանց ճանապարհով ընթանալու: Նրանք աւարտել են գիմնազիան և համալսարանականներ են: Խնդրում եմ ձեզ՝ ծնողներին, միջոցներ ձեռք առնէք, խրատէք ձեր որդիներին, որ ձեռք վերցնեն բռնի եղանակներից: Եթէ տեսչի դէմ դանդաղ, բողոք ունեն, թող դիմեն ինձ, երբ կը տեսնեն ես անտարբեր եմ վարվում դէպի նրանց բողոքները, թող դիմեն ինձից բարձր իշխանութեանը, մասնաւոր թուրքերից դժգոհներ չը կան, թող հայերն ևս հետեւեն նրանց օրինակին»:

Թուրքերն այստեղ ևս միաձայն յայտարարեցին, որ իրանք տեսչի դէմ ոչինչ չունեն, միայն իրանց երեխանքը հայերի երկրորդ ուսումնարան չեն յաճախում:

Երկու ու բարակ խօսելուց յետո՝ ժողովը որոշեց, երկու ազգից խառն մասնաժողով ընտրել և այդ կնճռոտ հարցը յանձնել նրա լուծման:

Դժբախտաբար մասնաժողովի մէջ մտան այնպիսի մարդիկ թուրքերից, որոնք յայտնի են իբրեւ թաւ թխրողներ...

Աւ. Սահակեանց

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Հոկտեմբերի 7-ին

Վերջին վիճակագրութիւնից երևում էր, որ Վաղարշապատում ունէր 600 տուն. իսկ այժմ հաշուած են մօտ 800, որոնք բոլորն էլ զուտ հայեր են: Գիւղը հետզհետէ ընդարձակվելով՝ աների շարքը արեւելեան կողմից հասել է մինչև Հոփսի մէջ վանքը: Ժողովուրդը պարագլում է ընդհանրապէս երկրագործութեամբ, այգեպանութեամբ, անասնապահութեամբ և մասամբ էլ մեղուաբուծութեամբ: Արհեստը այստեղ ծաղկած դրութեան մէջ չէ, դրա համար էլ ժողովրդի մեծ մասը աղքատ է—խօսքը բացառութիւնների մասին չէ: Կա—նայր պարագլում են մեծ մասամբ անային գործերով, իսկ օրիորդները վերջին ժամանակներն աչքի են կան իրանց կանանց գեղեցիկ զգեստներով (ծղոնոնայ) և պարանից մեկ կտորից հողթիւններ պատրաստելով: Ծնորդի տեղիս երիտասարդութեան ոյժին՝ արեւոյդութիւնը և թղթախաղը այստեղ վերջացած կարելի է համարել:

Գիւղը ոռոգվում է Գասախ գետից, որի ջուրը չէ բաւականացնում իր ջրաբաշխում գտնված բոլոր գիւղերին, դրա պատճառով գիւղացիներն մէջ յաճախ պատահում են կռիւներ, տուր ու դժգոհներ և երբեմն էլ մարդապահութիւններ: Տեղական բերքը կազմում է գլխաւորապէս խաղողը, ցորենը, բամբակը և գարին, որոնք գրեթէ ամբողջապէս արտաւարում են Վրոյրից: Գիւղը ունի մի եկեղեցի և երկու դպրոց՝ օրիորդացի և տղայացի, որոնց գոյութիւնը մի կերպ պահպանվում էր աշակերտների և աշակերտուհիների թղթախաղի և գիւղի սպանդանոցի ու բազմաթիւ եկամուտներով:

Գիւղի ընդարձակվելը, ծուխի շատանալը ու եկեղեցու հեռաւորութիւնը տեղիք է տուել ծխախոտների դիմելու վնասգաւ Կաթողիկոսին և խնդրելու Շողակաթ կոչված վանք ժողովրդական եկեղեցի դարձնել և ոչ թէ մի թղթիկ. իսկ նրա հողերը և այգիներն ամբողջապէս զաւթի օգտին, որի համար զգրոցի անունը չի յիշատակ այդ վանքի, անուանվի Ծողակաթեան օր. դպրոց: Ընդհանրապէս մեզանում վանքերը խիստ կղզիացած վիճակի մէջ են գտնվում, այնպէս որ նրանց վիղարաւոր վանահայրերը, լինելու Դանթե կախկոպութեւ վարեպետ, ինչպէս մի մի կապալառուներ վանքի բոլոր եկամուտները գործ են՝ ածում իրանց բնահանգրէ համեմատ, չը մտածելով լուսաւորութեան կամ բարեգործական որ և է նպատակով ծառայելու: Երկի հենց այդ բանը աչքի առաջ ունենալով, վնասգաւ Կաթողիկոսը, ինչպէս այսօր հաստատ աղբիւրից իմացանք, յարգել է ժողովրդի արգելքը իրանց և հրամայել վերոյիշեալ վանքը դարձնել ժողովրդական եկեղեցի. իսկ նրա բոլոր հողերը (մօտ 20 դեմիատին) և մի մեծ այգի գնել տեղի երկսեռ դպրոցների տրամադրութեան տակ: Այսպէս ուրեմն, Վաղարշապատը ունեցաւ երկու եկեղեցի և մի նոր աղբիւր էլ աւելացաւ դպրոցների համար:

Հազիւ հազ մեր վանքերից մէկը մտաւ իր լսական դերի մէջ. երանի թէ միւս վանքերից էլ մօտ հանվէր այդ լուսատու կրթարաններին համար, որով մի փոքր կը սփռվէր առանց այն էլ անտեսապէս քաղաքային ժողովրդի դատը վիճակը: Մասնով մենք սրտանց ողջունում ենք Վաղարշապատի հասարակութեանը այդ կարևոր և ուրախ լուրի արձագանքը: Գ. Աղապարեանց

Երբից էլ մօտ հանվէր այդ լուսատու կրթարաններին համար, որով մի փոքր կը սփռվէր առանց այն էլ անտեսապէս քաղաքային ժողովրդի դատը վիճակը:

Մասնով մենք սրտանց ողջունում ենք Վաղարշապատի հասարակութեանը այդ կարևոր և ուրախ լուրի արձագանքը:

Գ. Աղապարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի օր, հոկտեմբերի 10-ին, Փոխարքայի ամուսին, կոմսուհի Վորոնցովա-Դաշկովա իր դստեր հետ այցելեց Վանքի մայր եկեղեցին և համբուրեց մ. Յակոբի մասունքը:

Ն. Կոմսուհի դպրոցի ուսուցչական խումբը հոկտեմբերի 10-ին հեռագիր ուղարկեց Մօսկվայի համալսարանի թէկտորի օգնականին, որի մէջ խորին ցաւակցութիւն է յայտնում այդ համալսարանի թէկտոր իշխան Ս. Տրուբնիկովի անժամանակ և անփութարիւնի կոտորուած պատճառով:

Թիֆլիսում տեղեկութիւններ են ստացվել, ասում է «ԵՏԵՔԱՅԵ»-ը, որ Զեյնալիի գաւառում 800 զինված բուրժուա յարձակվել են տեղական կառուածատէր Զէյնալա-աղա Զէյնալի-չիւր Սիխուսի Բեգլիի կառուածները վրա և կողոպտել են: Զինված ընդհարման ժամանակ երկու կողմից էլ զոհեր են եղել—Իսկ տեղական միւս թերթերում 800 բուրժուա խաբէն ասված է 800 զինված հայեր:

Հոկտեմբերի 9-ին հոգեհանգիստ կատարվեց և տեղի ունեցաւ վրաց բանաստեղծ Նիկ. Բաւարթալիի արձանի բացումը Դիդուբեի եկեղեցու բակում: Հոգեհանգիստին և արձանի բացմանը ներկայ էր ահագին հասարակութիւն. մասնաւոր գրականութեան և թատրոնական աշխարհի ներկայացուցիչներ և ուրիշներ:

Աստուխանի թեմակալ-առաջնորդ Արիստակէս Եպիսկոպոս Սեդրաքեանը խմաց է տուել Կովկասի Փոխարքայի դիւանին, որ Արմաւիրում բացվել է հայոց ծխական դպրոց:

«Շարքի Ռուսի» խմբագիր Մահմադ Աղա-Շահթախտիսկին Կովկասի գլխաւոր իշխանութեանը մի խնդր է ներկայացրել մահմա-տականների կողմից, որով խնդրվում է միջնորդութիւն յարուցանել թողութիւն ստանալու, որ ամեն ցանկացող կարող լինի ազատիցն դառնալ մահմադական:

Մօտ օրերս կը նշանակվի եապանական դեսպան Պետերբուրգում:

Փորթիկ ազատամտական հովիտ են երևում Պետերբուրգում: Մակսիմ Կաւալիսկին թողութիւնը են սկսել դաւախութիւններ Անգլիական պետական իրաւունքի պատմութեան մասին՝ պօլիտէխնիկական ինստիտուտում: Տպագրվել է Լաստիի գործերի ժողովածու. երկրորդ հատորը առանց որ եւ կ'ընթանա: Ո՛վ ժամանակներ... կային օրեր, երբ այդ նոր գրութիւնները համար մարդկանց բանալի էին դնում, հեռու-հեռու արթնում:

Այնպէս չարագործներ զինված յարձակում գործեցին Շուշու մօտ գտնվող բժշկ Մովսէս Աթաբեկեանի տան և ջրաղացի վրա: Յարձակումը յետ է մղված:

Հոկտեմբերի 8-ին, ցերեկվայ ժամը 1 և 45-ը. Բաթումում, Գուրթախում, Բիւնում, Սամթրէիում և նրանց շրջակայքում զգացվել է բաւական զօրեղ երկրաշարժ:

Հոկտեմբերի 8-ին Բաթումից մի խումբ վրացիներ հետեւալ հեռագիրն են ուղարկել «НОВОСТИ» լրագրին (պատճէնը «РУБ»-ին). «№184 «НОВ.»-ում զետեղված է մի յօդուած, որի չափաան է հաստատել, որ վրացիներն մէջ սեպարատիզմ կայ,—այդ լուրը միանգամայն հնարովի է. վրացիները ոչ մի հասարակական խմբակ, ոչ մի քաղաքական կուսակցութիւն նպատակ չէ դրել բաժանվել Ռուսաստանից: Այդպիսի յօդուած տպելը զուտ պրօպագանդա է (գրգռում). դա աւելի ցատկ է, որովհետեւ այժմ վերջապէս լուրջ կերպով հարց է բարձրացված ծայրագաւառները կարգաւորման: Մենք, վրացիներս, յայտնում ենք մեր արհամարհանքը դէպի այդ յօդուածի նպատակը և ենթադրում ենք, որ

